

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ԺԳ. ԴԱՐԻ ՄԻ ՈՒՂԵՒՈՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ.

Burchardus de Monte Sion—այսպէս է կոչւում այդ ուղևորը—հայ բանասէրների շրջանում շատ ծանօթ դէմքերից չէ։ Դոմինիկեան այդ վանականի անունը, որքան ինձ է յայտնի, առաջին և վերջին անգամ անցողակի յիշել է մեղանում Հ. Ղ. Ալիշան*)։ Իւր ըստամենայնի պատկասաւոր ցուցակի մէջ Կ. Վոստանեանց**) չի մտցնում նաև այդ ուղևորի անունը, թէև վերջինս, որպէս հայոց երկրի հին այցելուներից և նկարագրողներից մէկը—նա անցել է Կիլիկիա Լևոն Գ.ի ժամանակ, ըստ երևոյթին 1284 թուականի գարնանը—զուրկ չէ որոշ հետաքրքրութիւնից։ Եւ որովհետև իրեն ժամանակակից Վիլբերանդտի, Ռուբրուքի, Մարկո Պոլոի և այլոց պէս այս ուղեգիրը ևս կարող է որոշ արժէք ունենալ հայոց անցեալով հետաքրքրւողների համար, աւելորդ չը պէտք է համարուի նրա «Նկարագրութեան» լատին բնագրից***) ըստ կարելոյն բառացի փոխադրութեամբ քաղել այստեղ հայերին վերաբերող հատուածները։

«Եղայ նաև Հայաստանի և Կիլիկիայի թագաւորի մօտ։ Կային նրա մօտ նաև քանի մի թաթարներ։ Միւսները սակայն բոլորը, որ ծառայողների թուին էին պատկանում, քրիստոնեաներ էին, թուով մօտ 200 հոգի։ Տեսայ սրանց եկեղեցի շտապելիս, պատարագին ներկայ գտնուելու, ծնկաչոք և ջերմեռանդութեամբ աղօթելու։ Եւ որտեղ հա և իմ ընկերը հանդիպում էինք նրանց, շատ պատուում էին մեզ զլիարկ վերցնելով, յարգանքով խոնարհուելով ու ողջունելով մեզ. մեր ողջոյնի պատասխանից յետոյ էին միայն բարձրացնում նրանք իրենց գլուխները։

*) Սիսուան, եր. 223, 344.

**) Հմմ. «Հայաղիտութիւնն արեւմտեան եւրոպայում» Թիֆլիս 1910.

***) «Descriptio Terrae Sanctae»—(Peregrinatores Medii aevi guatuor. ed. F. C. M. Lauent, Lipsiae 1864, in 4°).

«Հայոց, ինչպէս և վրաց, եկեղեցու գլուխը կոչուում է կաթողիկոս: Նրա մօտ*) ցնացի 14 օր, կային նրա հետ արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ, վանահայրեր և ուրիշ շատ եկեղեցականներ: Իւր նիստ ու կացուի, հազուստով և խօսակցութեամբ նա այնքան ինքնայատուկ էր, որ նմանը չեմ տեսել ոչ կրօնաւորների, ոչ էլ աշխարհականների մէջ: Կարող էք հաւատալ, եթէ ասեմ, որ նրա հագած բոլոր շորերը իմ հաշւով ոչ մի գէպքում հինգ սօլիդ ստերլինգից**)) աւել չէին արժենայ, թէև նա ունէր խիստ ամուր մի զղեակ, մեծ եկամուտ և անբաւ հարստութիւն: Գործ է ածում նա ոչխարի մորթուց պատրաստած մի լայնաթեւ վերնագոգեստ (pellicius)՝ կոշտ, կարմրագոյն, միանգամայն կեղտոտ ու անմաքուր և ապա հնացած և գրեթէ մաշուած մի ներքնագոգեստ (tunica): Բացի այդ նա կրում էր սև ուսապանակ (scapulare, հմմ. ֆրանս. scapulaire) և սև թիկնոց (pallium)՝ աժան և կոպիտ գործուածք:

Հայոց և կիլիկիայի թագաւորին տեսայ իւր բոլոր իշխանների և յաճախ իւր նախածին որդու ***)) հետ խոնարհութեամբ ու մեծ յարգանքով նստած նրա ոտերի առջև, ամենայն երկիւղածութեամբ Տիրոջ խօսքը լսելիս: Կաթողիկոսը իւր բոլոր հոգևորականների հետ պահում էին քառասնորդը (quadragesima) հացով և ջրով, նմանապէս և թագաւորը իւր բոլոր իշխաններով, բացառութեամբ Աւետեաց օրուայ, երբ իմ ներկայութեամբ կաթողիկոսը թոյլ տուեց նրան ձուկ ուտել և զինի խմել: Այդ օրը ներկայ էի պատարագին, որ տեղի ունեցաւ նոյն կաթողիկոսի, թագաւորի և թագուհու ներկայութեամբ: Արարողութիւնը կատարուում էր մեծ երկիւղածութեամբ: Պէտք է ասել, որ նրանց քահանաներն ու եպիսկոպոսները զգեստաւորուում են մերոնց պէս: Պատարագի ժամանակ պատրաստուած են բազարջ, կարգում են միևնոյն խօսքերով միևնոյն թերթերն ու աւետարանը, երգում են մի և նոյն «Սուրբ-սուրբ», «Հայր մեր», «Վառն Աստուծոյ» սկզբուածքները, սակայն իրենց բարբառով և գրքերով, որովհետև նրանք ունեն նաև իրենց առանձին լեզուն և գրականութիւնը: Կաթողիկոսը ինքը և միւս բոլոր նուիրապետները կուսակրօն են: չի կարելի գտնել ամբողջ արևելքում նուիրապետներ ինչ ազգից էլ դրանք չը լինեն, որ կուսակրօն չը լինէին: Եւ պէտք է ասել, որ բոլոր կուսակրօնները վայելում են այստեղ մեծ յարգ ու պատիւ: Ստո-

*) Իմա՛ կաթողիկոսի՝ Յակոբ Ա. Կլայեցու մօտ:

**) Ըստ հրատարակի այդ գումարը համարժէք է 64 թալրի եւ 25 դրոշ արծաթի»:

***)) Տետագայի Հեթում Բ.

րին հոգևորականութիւնն ու քահանաները չունեն սակայն ոչ մի իշխանութիւն և աշխարհականներից էլ բանի տեղ չեն տրուում. եկեղեցական ծէսեր կատարելուց զատ, նրանք այլ պաշտօն չունեն: Վերջացնելով գիշերուայ ժամասացութիւնը անցնում են առաւօտեան ժամասացութեան. առաւօտեան ժամասացութիւնից յետոյ չեն քնում, այլ եկեղեցում նստած ուսուցանում են ժողովրդին մինչև արեւածագը և ապա մատուցանում են առաջին պատարագը կամ թէ սա տեղի է ունենում երրորդ ժամի մօտերքը, եթէ օրը տօնական է: Ոչ մի բան չէ վայելում հեղինակութիւն, եթէ թոյլ չէ տրուած վարդապետից (verthabite), բոլոր քահանաները ամուսնացած են և թոյլ էլ չի տրուում որ և է մէկին պաշտօն կատարել, եթէ ամուսնացած չէ: Երկուշաբթիից մինչ ուրբաթ (քահանաները) երբէք պատարագ չեն մատուցանում, եթէ տօն չկայ, այլ ազատ են ամուսնական պարտականութիւններ կատարելու (vacant amplexibus): Շաբաթ և տէրունական օրը տեղի է ունենում շատ շքեղ պատարագ, հնոջ մահուանից յետոյ քահանան կրկնամուսնութեան իրաւունք չէ վայելում ու չը պէտք է բերէ ուրիշ կին: Եթէ նա շնանայ կամ անհաւատարիմ գտնուի, զրուկում է պաշտօնից և պէտք է թողնի եկեղեցին, որպէս զի սա չը պղծուի: Եթէ երէցկիւնն անհաւատարիմ գտնուի, քահանան կարող է պաշտօնազուրկ լինել ու հեռացուել եկեղեցուց, երէցկիւնը սակայն քթատուում է, իսկ այն տղամարդը, որ կենակցել է նրա հետ ենթարկւում է ամորձատման, եթէ նոյն իսկ նա ամուսնացած էլ լինի: Այսպիսի մի դէպք տեղի ունեցաւ իմ ներկայութեամբ: Քահանայի մահուանից յետոյ նրա կինը չը պէտք է մարդու գնայ, եթէ օրինազանց լինի՝ կայրուի, սակայն եթէ պոռնկանայ՝ ոչ մի վատ բան չի պատահիլ նրան: Կայ նրանց մօտնակ մի նոր կանոն, առաքեալների հետևողութեամբ քահանայացուն պէտք է ամուսնանայ կոյսի հետ: Հայ և վրաց քահանաները տարբերւում են աշխարհականներից նրանով, որ սպիտակ կտուէ կտորով փաթաթում են իրենց պարանոցն ու վիզը:

Այն գողերը, որ ամենաթեթեւ գողութիւնն ունեն արած կամ այն ոճրագործները, որ թեթեւ ոճիրն ունեն կատարած, ամորձատուում են, որպէս զի հայրերի ոճրագործութիւնները ընդօրինակող զաւակներ չը ծնեն: Այն երեւոյթը, որ այստեղ պոռնիկներ այնքան շատ կամ, թուում է ինձ, ունի իւր պատճառը. այստեղ շատ ներքինիներ կան, որոնք բոլորը ծառայում են որպէս ստրուկ ազնուուհիներին, հայոց թագուհին, այն ժամանակ երբ ես նրա մօտն էի, ունէր, կարծեմ, աւելի քան 40 ներքինի: Առանց թագաւորի յատուկ թոյլտուութեան ոչ մի տղամարդ չի կարող մտնել թագուհու մօտ: Թագուհու մօտ գնացողը պէտք է յիշատակու-

Թեան արժանի մի բան նուիրի այն ներքինուն, որ նստում է նրա առաջ: Նոյնը տեղի է ունենում և բոլոր ազնուհիւնների նկատմամբ, լինեն զրանք ամուրի թէ ամուսնացած:

«Թագաւորական տան անդամները, իշխանները և բոլոր ազնուականները սիրով են լսում Աստուծոյ խօսքը: Դրա համար է, որ իւրաքանչիւր օր ժամը 3-ին մի վարդապետ կամ վանական գալիս է Թագաւորի ու իշխաններից իւրաքանչիւրի ամրոցը. զրանց մօտենում է միշտ իշխանը ինքը, մենակ կամ թէ զաւակների ու տնացիների հետ ի միասին: Վանականները գնում են առաջները որ և է մի գիրք և կարգում նրանց ներկայութեամբ ռամկօրէն (in vulgari)՝ որովհետեւ ուրիշ լեզու չը գիտեն, կամ թէ բացատրում նրանց դոցա բնագիրը, և, եթէ աշխարհականները որ և է տեղ կասկած ունեն, առաջադրում են հարցեր և ստանում վանականներից զրանց մեկնաբանութիւնը սրբոց ցուցմունքների համաձայն: Եւ հարցրի վանականներից իսկ, թէ սրանցից նրանք ռիւրի ուսմունքներին են ամենից շատ հետեւում: Ասացին, որ զըլխաւորների շարքին են դասում Յովհան Ոսեկբերանին, Գրիգոր Աստուածաբանին և Կիւրեղ Աղէքսանդրիացուն: Թէ հոգեւորականները և թէ աշխարհականները եկեղեցում պահում են իրենց շատ վայելուչ ու ոչինչ չեն անում այնտեղ բացի աղօթելուց, երգելուց և այն բոլորից, ինչ պիտի կատարեն ըստ օրինաց: Երբէք չէք տեսնի մէկին ծիծաղելիս եկեղեցում կամ ոչ լուրջ վերաբերմունք ցոյց տալիս:

Պատարագի խորհուրդը կատարւում է նրանց մօտ ամենայն ջերմհոանդութեամբ: Սկիւր պահւում է սեղանի ձախ կողմը, սրա համար պատի մէջ յատկապէս պատրաստած մի տեղ: Պատարագի ժամանակ մետաքսէ աղլուխով ծածկած սկիւր բարձրացնում է սարկաւազը և բուրվառարկու կիսասարկաւագի (subdiaconus) առաջնորդութեամբ ու երկու մոմակալների ուղեկցութեամբ շրջում է սեղանով դէպի աջ կողմը, ապա եպիսկոպոսը երկիւղածութեամբ առնում է այն և մատուցանում իւր պատարագը մերոնց պէս: Երկու հոգի վառած մոմերով կանգնում են պատարագչի յետեւ infra canonem և զրանց մօտ՝ երկու բուրվառարկու սպիտակ շապիկներով: Երկու սարկաւագ կանգնում են սեղանի անկիւններում, աջից և ձախից, իրարու վրայ զրած ավերով, ջերմօրէն աղօթելով, հրեաները դէպի Քրիստոսի մարմինը դարձրած փոխէփոխ քանի մի խիստ երկիւղած մեղեդիներ երգելով: Այս բոլորը տեսնել ու լսել անկասկած չափազանց ակորթելի է:

Շատ ուրիշ բաներ ևս տեսայ այն երկրում, ինչպէս աշխարհականների նոյնպէս և հոգեւորականների մէջ, խիստ օրինակելի և որոնք սակայն մեր երկրում հազիւ կարող էին իրագործելի թուալ: